ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հետքննող լրագրողներ հասարակական կազմակերպության

Հետք պարբերականի լրագրող՝ Սեդա Ղուկասյանին

Հարգելի տիկին Ղուկասյան

Ի պատասխան Ձեր 25.11.2017թ.-ի հարցմանը տեղեկացնում եմ, որ ԱԺ 6-րդ գումարման նստաշրջանների ժամանակահատվածում իմ և իմ 3 օգնականների (Անի Արշակյանի, Կարեն Կարապետյանի և Հրաչյա Հակոբյանի) կողմից մշտապես կազմակերպվել են քաղաքացիների հետ հանդիպում-ընդունելություններ, ինչպես իմ Թումանյան 8 հասցեում գործող գրասենյակում, այնպես էլ Ազգային Ժողովում:

Գրասենյակը գործում է երկուշաբթիից-ուրբաթ օրերին, առավոտյան 10:00-18:00:Գրասենյակ դիմած քաղաքացիների հիմնական հարցերը կրում են իրավական ու սոցիալական բնույթ, որոնց օրենքով սահմանված և հնարավորության սահմաններում տրվել են համապատասխան լուծումներ և դրանցից շատերը այս պահին ընթացքի մեջ են:

Սույն թվականի հուլիսի 25-ին ՀՀ Շախմատի երիտասարդական հավաքականի առաջատար գրոսմայստերներից մեկի՝ Վլադիմիր Կանջարյանի նկատմամբ ընտրված կալանքը որպես խափանման միջոց փոխելու համար, ՀՀ գլխավոր դատախազին և համապատասխան դատարան ներկայացվել է անձնական երաշխավորություն:ԱՆձամբ իմ կողմից քաղաքացիների ընդունելություն կազմակերվում է շաբաթը 1 անգամ՝ հիմնականում ուրբաթ օրերին, ժամը 11:00-15:00:

Արարատ Զուրաբյան

30.11.2017թ.